

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



«Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արժեքահամակարգի ձևավորումը ֆիզիկայի դասերին

Կատարող՝ Լիլիթ Սարոյան

Ղեկավար՝ Կարինե Սամվելյան

Երևան -2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ
3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ
4. ԴԱՍԻ ՊԼԱՆ
5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև դրված է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունն ուղղված է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

ՀՀ-ի կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր: Անկախացումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդունակ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված էր ճշգրիտ որոշել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները և ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում: Արագընթաց

փոփոխությունների պայմաններում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք,
- ունենա ազգային ինքնագիտակցություն
- կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:

- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն...

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ: Ցույց տալ ֆիզիկա առարկայի դերը սովորողի կյանքում, ընդգծել դրա օգնությամբ սովորողներին ճիշտ ուղղորդելու և արժեքային համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը:

Հետազոտության խնդիրն է ուսումնասիրել այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ուսուցչին ֆիզիկայի դասավանդման ընթացքում առաջնահերթություն տալ նաև արժեհամակարգի ձևավորմանը:

Այս նպատակով անհրաժեշտ է՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն,
- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին,
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ է հանդիսանում դասարանը, որտեղ կատարվել է դասապրոցես:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ դիտարկում, թեստավորում, վերլուծություն և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Մերունդների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը միշտ եղել է մանկավարժների, փիլիսոփաների, հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում :Ակտիվ գործունեության ընթացքում են զարգանում խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարեւորը՝ ինքնուրույն իմացական գործունեությունը, շահագրգռվածություն ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար: Այնուամենայնիվ, որքան էլ հոգեբանները, փիլիսոփաները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ, ուսումնառության արդյունավետության խնդիրը մնում է չլուծված կամ ոչ ամբողջապես լուծված, քանի որ ուսուցչի համար խնդիր է մնում, թե ինչպե՞ս կիրառվի կամ օգտագործվի այդ գործիքը, արդյո՞ք դասի մոդելը կօգնի հասնել դրան: Ըստ այդմ էլ , յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր առարկային համապատասխանող ռազմավարություն և տալիս առաջ եկած խնդրի լուծում: Հայտնի է, որ հոգևոր-բարոյական դաստիարակության կարևոր սկզբունքներից մեկը շարունակականության սկզբունքն է՝ մարդու ուսուցման, դաստիարակության և զարգացման փոխկապակցված գործընթացը նրա ամբողջ կյանքի ընթացքում: Աճող սերնդի հոգևոր-բարոյական դաստիարակությունը պետք է ընթանա որպես շարունակական պրոցես և կրի համակարգված, այլ ոչ թե դիպվածային բնույթ: Այսինքն դասի ընթացքում, բացի ընդհանուր ուսումնական խնդիրներից, ուսուցիչը պետք է նաև դաստիարակչական խնդիրներ լուծի: Հասարակության զարգացման տարբեր փուլերում սովորողների հոգևորբարոյական դաստիարակության խնդիրը տարբեր կերպ է լուծվել, տարբեր է եղել նաև նրա բովանդակությունը, ինչը երևում է նաև մեր պետության պատմության օրինակով: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ արդի դպրոցի նպատակը նախ և առաջ լուսավորյալ, մարդասեր, հոգևոր հարուստ, ակտիվ, բարձր բարոյական, իր հայրենիքը սիրող, իր երկրի պատմությունն ու ավանդույթները հարգող մարդու դաստիարակությունն է:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ՖԻԶԻԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն

անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ո չմանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Կարևոր է արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովումը, որի համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Ընդորոմ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են

նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Սյստեղ գերիշխող է հեռուստատեսությունն իր գովազդներով, հարուստ կյանքի, ճոխության, բռնության իր պրոպագանդայով:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կադապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրեն ցետևից»:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաբուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատժ ամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն:

Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձև ավորումն է»²:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտ շի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասուղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդամին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի

անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաներին կատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր ըզրագացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ուկարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով սովյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Յուրաքանչյուր, այդ թվում նաև ֆիզիկայի ուսուցչի առաջ կանգնում է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման,

սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Որպեսզի ֆիզիկա առարկան յուրաքանչյուր աշակերտի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ:

Մեր հասարակության մեջ կատարվող փոփոխությունները, հայրենական մանկավարժական գիտության և անձնակողմնորոշիչ ուսուցմանը անդրադարձը հանգեցրին դպրոցում ֆիզիկայի ուսուցման ընդհանուր ռազմավարության վերանայմանը:

Արդյունքում առաջացան դաստիարակության համակարգի կառուցման որոշակի նախադրյալներ և իրական հնարավորություններ: Դրանք իրենց մեջ ներառում են հետևյալ ասպեկտները.

Բարոյական, որը ենթադրում է ոչ միայն տեսնել, հասկանալ և զգալ գիտության գեղեցկությունը, այլ նաև հասկանալ գիտության և տեխնոլոգիաների նվաճումների խելամիտ օգտագործման անհրաժեշտությունը՝ հանուն մարդկային հասարակության հետագա զարգացման և շրջակա միջավայրի պահպանության: Քաղաքացիական, որը ենթադրում է ակտիվ կենսադիրքորոշմամբ ստեղծագործ անձի ձևավորում, որ հարգանքով է լցված գիտություն և տեխնիկա ստեղծողների հանդեպ, որոնք ապահովում են ֆիզիկայի առաջատար դերը տեխնիկայի արդի աշխարհի ստեղծման գործում:

Հայրենասիրական, որը ենթադրում է հայրենիքի, նրա հարստության և մշակութային ավանդույթների մասին տեղեկությունների ուսումնասիրում, որն օժանդակում է իր քաղաքի, գյուղի, ավանի հանդեպ սիրուն, դաստիարակում է իր երկրի քաղաքացի:

Առողջապահական, որը ենթադրում է գիտելիքների ձևավորում հանուն առողջ կենսակերպի, մարդու և հասարակության անվտանգ կենսագործունեության ապահովման:

ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված Հանրակրթության պետական չափորոշչում առաջին անգամ հստակ սահմանվեցին արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված սովորողին ներկայացվող պահանջները, որոնք արտահայտվում են սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

Այստեղից երևում է, որ արդի ժամանակներում հատուկ ուշադրություն դրվեց վերառարկայական կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի (դաստիարակության) պահանջների ձևավորմանը:

Նման պահանջները սահմանվեցին այնուհետև «Ֆիզիկա» առարկայի չափորոշիչներում: Այսպիսով, հնարավոր դարձավ ձևակերպել հետևյալ դաստիարակչական խնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել ֆիզիկայի դասերին: Սովորողներին ծանոթացնել գիտության և տեխնիկային դասականների ստեղծագործություններին՝ որպես անձի դաստիարակության ու ինքնաիրացման

միջոց:

➤ Կենսագրական նյութը պետք է միաժամանակ կապված լինի կոնկրետ նյութի հետ, ներառվի ընթացիկ նյութի շարադրման տրամաբանության մեջ: Անհրաժեշտ է սովորողների գիտակցությանն հասցնել այն, թե կոնկրետ ինչ է արել այս կամ այն գիտնականը, ինչպես են նրա հայտնագործությունները կամ գյուտերը ծառայում մարդկության բարորությանը: Օրինակ, Գ. Գալիլեյը՝ իներցիայի և ազատ անկման երևույթի ուսումնասիրման ժամանակ, Լոմոնոսովը՝ կապված նյութի կառուցվածքի մոլեկուլային-կինետիկ տեսության ուսումնասիրման հետ, Ա. Պոպովը՝ ռադիոկապի սկզբունքներն ուսումնասիրելիս, Գ. Ասատրյան՝ ոչ գծային օպտիկայի Համբարձումյանը՝ աստղաֆիզիկայի ջերմամիջուկային ռեակցիաներն ուսումնասիրելիս, Ալիխանյան եղբայրները՝ միջուկային ֆիզիկայի և տարրական մասնիկների ֆիզիկական ուսումնասիրելիս, Մ. Տեր Միքայելյանը՝ լազերային ֆիզիկայի հարցերն ուսումնասիրելիս և այլն:

➤ Հիմնարար ֆիզիկական տեսությունների և գիտափորձերի, հետազոտության մեթոդների ուսումնասիրության հիման վրա սովորողների մեջ ձևավորել պատկերացում առ այն, թե ինչպիսի դժվարությամբ են ձեռք բերվում, հիմնավորվում ու կառուցվում գիտական գիտելիքները, ձևավորվում համոզմունքներ աշխարհի գիտական պատկերի և մարդու համար նրա կարևորության մասին:

➤ Սովորողներին բացատրել ֆիզիկայի դերը, ասենք, հայրենիքի պաշտպանության և ռազմական տեխնիկայի ստեղծման մեջ, ֆիզիկայի դասերին ուսումնասիրվող ֆիզիկական երևույթների ու օրենքների ռազմական տեխնիկայում կոնկրետ կիրառման օրինակներով, ապագա զինվորին անհրաժեշտ պրակտիկ կարողությունների ձևավորումով դրվում են սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմքերը:

➤ Զարգացնել հուզական-արժեքային մտածողությունը գիտության և արվեստի փոխազդեցության օրինակով:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասդեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Օրինակ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու տարրողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում,

ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձին կատմամբ: Իսկ ի՞նչ ձևերով, մեթոդներով և տեխնոլոգիաներով է նպատակահարմար ֆիզիկայի դասաժամին սովորողին տալ հնարավորություն նաև արժեքներ տեսնել, գնահատել: Անշուշտ, դրան հասնելու համար նախ անհրաժեշտ է ֆիզիկայի ուսուցման գործընթացը անհատականացնել, որը նշանակում է՝

- ✓ ձևավորել սովորողների ճանաչողական հետաքրքրությունները, նրանց մտավոր և ստեղծագործ ունակությունները,
- ✓ սովորողներին տալ բնության ճանաչման հնարավորության գիտակցում՝ հիմք ընդունելով գիտության ձեռքբերումներն ու այդ հենքի վրա քաղաքակրթական զարգացումները,
- ✓ սովորողներին ընձեռել ֆիզիկական գիտելիքների ինքնուրույն ձեռք բերման հնարավորություն,
- ✓ անհատական ուղղորդված մոտեցումներով սովորողներին մոտիվացնել դեպի կրթության և ճանաչողության բնագիտական տիրույթ,
- ✓ ուսումնական նյութի նորարարություն, ֆիզիկայի օրենքների ու հետևությունների անսպասելիություն սովորողների համար,
- ✓ ուսումնական հայտնի բովանդակային նյութի ուսումնասիրում նոր տեսակետի առկայությամբ,
- ✓ ֆիզիկայի դասապրոցեսում այդ գիտության զարգացման պատմության առանձին դրվագների նպատակային օգտագործում և անդրադարձ,
- ✓ հաղորդած ուսումնական գիտելիքի կենսունակության և հրատապության ցուցադրում,
- ✓ սովորողների ծանոթացում գիտատեխնիկական ու տեխնոլոգիական նորություններին:

Այստեղից կարող ենք եզրահանգել, որ այս գիտությունն ունի համապատասխան զինանոցը՝ սովորողների գիտակցությունը բարձր մակարդակի վրա հասցնելու: Այստեղ կրկին կարևորենք առարկայի ուսուցչի դերակատարումը, ինչն առանցքային է այն տեսակետից, որ մեր առջև դրված խնդիրը իրատեսական է միմիայն ուսուցչի՝ դասը ճիշտ պլանավորելու ունակություններից ելնելով: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսումնական ծրագրերով նախատեսված բոլոր առարկաները՝ այդ թվում ֆիզիկան, կարող է սովորողի մեջ ձևավորել բարձր

արժեքային համակարգ, իսկ այս հարցում ուսուցիչը պետք է ամեն բան անի, որ կարողանա ուսուցման գործընթացն այնպես կազմակերպել, որ ստանա առավելագույն արդյունք: Այս աշխատանքը մեծ չափով կօգնի մեզ մեր մանկավարժական հետազոտությունների ընթացքում, որպեսզի էլ ավելի կառուցողական մոտենանք սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորմանը:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

7-րդ դասարան

Դաս 28 § 28 Ուսումնական նյութի ուսումնասիրություն

Թեմա. Շփման ուժ:

Նպատակը. Ձևավորել գիտելիքներ շփման ուժի, նրա տեսակների և առաջացման պատճառների մասին:

Հիմնական բովանդակությունը. Հասկացություններ՝ Շփման ուժ: Դադարի շփում: Սահքի շփման ուժ: Գլորման շփում: Շփման ուժի առաջացման պատճառները:

Զարգացնել

1. Համագործակցային հմտությունները

2. Եզրահանգումներ կատարելու կարողություններ:

Ցուցադրումներ: Չափել դադարի և սահքի շփման ուժերը, չորսուի նույն բեռնվածության դեպքում:

Ակնկալվող արդյունքներ

Այս թեման ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է՝

✓ Իմանա շփման ուժի տեսակների տարբերիչ հայտանիշները,

✓ Կարողանա սահմանել շարժման ուժը և նրա տեսակները,

✓ Կարողանա օրինակների միջոցով բացատրել շփման ուժի դրական և բացասական կողմերը բնության մեջ:

Տնային հանձնարարություն՝ § 28, հարց 2, 5, 7

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ՝

Խթանում՝ 10 րոպե

Նախորդ դասի վերաբերյալ հարցերի պարզաբանում, ֆրոնտալ հարցում: Հարց ու պատասխանի միջոցով վերահսկել աշակերտների գիտելիքները:

Իմաստի ընկալում՝ 20 րոպե

Նախօրոք տեքստը բաժանել 3 մասի: Դասարանը բաժանել 3 խմբի: Ամեն խմբին տալ դասի նյութի մի մասը և հանձնարարել սովորել և ձևավորել հուշող հարցերով, նկարներով և այլ նշաններով պաստառ, որ կարողանան ներկայացնեն իրենց սովորածը:

Աշխատանքը խմբերում ավարտելուց հետո իրենց ստեղծած պաստառներից օգտվելով ներկայացնեն հանձնարարված մասը:

Կշռադատում՝ 10 րոպե

Նյութի ամբողջական ներկայացումից հետո ամփոփել թեման, նախ՝ հայտորոշիչ թեստի միջոցով, ապա բանավոր հարցերի միջոցով անհասկանալի մնացած նյութ պարզաբանելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո կարող ենք անել հետևյալ առաջարկությունները.

- ✔ Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ:
- ✔ Դասաժամերին հավելյալ քննարկումները, պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու:
- ✔ Արժեհամակարգ լավագույնս կարող է ձևավորվել նաև.
- ❖ Ինտելեկտուալ խաղ-մրցույթների միջոցով:
- ❖ Սովորողների ինքնակրթությունը խրախուսելու միջոցով:
- ❖ Դասաժամերին ՏՀՏ գործիքների ավելի շատ կիրառության միջոցով:
- ❖ Կամավոր աշխատանքների մեջ աշակերտներին ընդգրկելով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով ուսումնասիրության նյութը՝ կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կներկայացնենք ստորև.

✓ Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

✓ Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաճ կատարումից:

✓ Պետք է դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձևավերել:

✓ Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, վստահելի հարաբերություններ ձևավորի սովորողների հետ:

✓ Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման ունենա սովորել Սովորոցներով հասկացությունը:

✓ Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական Գործընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք:

✓ Սովորողի համար պետք է ստորոգծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար:

✓ Ուսուցիչը պետք է ամեն կերպ փորձի նպաստել բարձր մարդկային որակներ ու արդարամտություն, ազնվություն, մարդասիրություն՝ անկախ դասավանդվող առարկայից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923> ՀՀ Կառավարության որոշում
2. <https://escs.am/files/files/2020-07-15/cef0eb2e6c040db0cfde0da134e32084.pdf>
Հանրակրթական դպրոցի ֆիզիկա առարկայի չափորոշիչ և ծրագիր:
3. <http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf>
Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005:
4. <https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf>
Ի. Փարեմուզյան, «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում»:
5. <http://gspi.am/media/journal/2014n1b/22.pdf> Գ. Ն. Հարությունյան,
Մանկավարժական խնդիրները և դրանց լուծման ուղիները տարրական դպրոցում:
6. [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Krtutiun1996/2018\(3-4\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Krtutiun1996/2018(3-4).pdf)
Ն.Գ. Մովսիսյան, Ֆիզիկայի խնդիրների լուծման ժամանակ սովորողների մտածողության զարգացման մի քանի հիմնահարցերի մասին:
7. <http://gspi.am/media/journal/2014n1b/20.pdf>
Ա. Մ. Զաղոյան Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում, Երևան, 2014, էջ 188: